ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N 1176-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2025 թվականի N -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N 1176-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 1-ի «Սպանդանոցային ծառայություն մատուցող տնտեսավարողների աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 1176-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) որոշման՝

ա. 1-ին կետի «համաձայն» և հավելվածի վավերապայմանների «Հավելված» բառերից հետո լրացնել «N 1» թիվը,

բ. 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1 Հաստատել սպանդանոցների կողմից մատուցվող խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի ծառայության վճարի մասնակի փոխհատուցման ծրագիրը՝ համաձայն N 2 հավելվածի։».

2) որոշման հավելվածի՝

ա. 5-րդ կետի 4-րդ ենթակետում «ձևի» բառից հետո լրացնել «և խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի արդյունքում «Սպանդանոցների կառավարում» միասնական էլեկտրոնային հարթակից գեներացված N 5 ձևի» բառերը.

բ. 10-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«8) Ծրագրի N 2 կամ N 3 ձևերում առկա չէ խոշոր եղջերավոր կենդանու նույնականացման անհատական համարը, կամ լրացված է այնպիսի համար, որը չի համապատասխանում «ԱՆԻ ՊԱՍ» էլեկտրոնային տեղեկատվական համակարգում առկա տվյալներին, կամ շահառուի կողմից ներկայացված սպանդի վերաբերյալ N 5 ձևի անասնաբուժական վկայականում նշված խոշոր եղջերավոր կենդանու նույնականացման անհատական համարը չի համապատասխանում Ծրագրի N 2 և N 3 ձևերում լրացված նույնականացման

անհատական համարին.».
գ. 10-րդ կետի 8-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ ենթակետով.
«9) խոշոր եղջերավոր կենդանիների տեղափոխման N 1 կամ խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի վերաբերյալ N 5 ձևերի անասնաբուժական վկայականների պատճենները բացակայում են։»,
3) որոշումը լրացնել N 2 հավելվածով՝ համաձայն Հավելվածի։
2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ ապահովել սպանդանոցների տեղակայման վայրի համայնքների հետ Ծրագրի շրջանակներում ստացված դիմումների ուսումնասիրության և մոնիթորինգի իրականացման համար նախատեսված գումարների տրամադրման պայմանագրերի կնքումը։
3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել առաջարկություններ «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և լրացում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի բ պարբերության, որն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող 30-րդ օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
....-ի N ....-Լ որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
Օգոստոսի 1-ի N 1176-Լ որոշման

ԾՐԱԳԻՐ
ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՍՊԱՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

1. Սպանդանոցների կողմից մատուցվող խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի ծառայության վճարի մասնակի փոխհատուցման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) նպատակը սպանդանոցային սպանդը խրախուսելու նպատակով պետության կողմից սպանդանոցներին սպանդի ծառայության ծախսերի մասնակի փոխհատուցումն (այսուհետ՝ փոխհատուցում) է։

2. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2. Ծրագրի մասնակիցներն են՝
1) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն).
2) Հայաստանի Հանրապետության այն համայնքները, որտեղ տեղակայված են սպանդանոցները (այսուհետ՝ համայնք).
3) սպանդանոցային սպանդի ծառայություն մատուցող տնտեսավարողները՝ կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը։
3. Ծրագրի իմաստով տնտեսավարող է համարվում սպանդանոցային սպանդի ծառայություն մատուցող այն տնտեսավարողը (այսուհետ՝ շահառու), որը՝
1) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանով հաստատված՝ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի «A (ԷՅ) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ» բաժնի «01.41.0» և «01.42.0» ենթադասերին դասվող գործունեության տեսակներով զբաղվող տնտեսավարողին (այսուհետ՝ ֆերմերային տնտեսություն) մատուցում է խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի ծառայություն.
2) նախարարության և համայնքի հետ կնքել է Ծրագրի N 1 ձևին համապատասխան սպանդանոցների կողմից մատուցվող խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի ծառայության վճարի մասնակի փոխհատուցման ծրագրից օգտվելու վերաբերյալ համաձայնագիր, որով ստանձնել է ֆերմերային տնտեսություններին Ծրագրով սահմանված պայմանների համաձայն խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի ծառայություն մատուցելու պարտավորություն.
3) ծրագրից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով չկատարված պարտավորություններ։
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող ամսվա 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը ֆերմերային տնտեսության համար մատուցած սպանդի ծառայության դիմաց պետության կողմից շահառուին տրամադրվում է ծառայության վճարի փոխհատուցում՝
ա. սպանդանոցի կողմից յուրաքանչյուր խոշոր եղջերավոր կենդանու սպանդի ծառայության մատուցման համար սահմանված վճարի չափով, բայց ոչ ավելի, քան 10000 Հայաստանի Հանրապետության դրամը,
բ. նախապես սահմանված սանիտարական օրերին բրուցելոզով հիվանդ կամ դրական հակազդած յուրաքանչյուր խոշոր եղջերավոր կենդանու սպանդի ծառայության մատուցման համար սահմանված վճարի չափով, բայց ոչ ավելի, քան 15000 Հայաստանի Հանրապետության դրամը։
5. Նախարարությունն ամսական պարբերականությամբ, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-րդ աշխատանքային օրը, համայնքին է փոխանցում Ծրագրի N 5-րդ ձևին համապատասխան ստացված եզրակացություններում նշված շահառուներին փոխհատուցման ենթակա գումարների 3%-ը՝ Ծրագրի շրջանակներում ստացված դիմումների ուսումնասիրության և մոնիթորինգի իրականացման համար։
6. Փոխհատուցում չի տրամադրվում ներտնտեսային (ֆերմերային տնտեսություններին խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի ծառայություն չմատուցող) սպանդանոցներին և շահառուին սեփականության կամ օգտագործման իրավունքով պատկանող կամ շահառուի հիմնադիր կամ ավելի

քան 10 տոկոս բաժնետեր հանդիսացող անձանց կամ նրանց ընտանիքի անդամներին (ծնող, ամուսին, զավակ) պատկանող խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի ծառայության դիմաց։
7. Փոխհատուցման տրամադրման գործընթացը նախաձեռնում է շահառուն, որը Ծրագրի N 2 ձևին համապատասխան էլեկտրոնային կամ թղթային տարբերակով (գրությամբ) դիմում է ներկայացնում համայնքի ղեկավարին, որին կցում է՝
1) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2024 թվականի մայիսի 21 -ի N 614- L հրամանով հաստատված հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը.
2) խոշոր եղջերավոր կենդանին սպանդանոց տեղափոխող անձի, խոշոր եղջերավոր կենդանու տվյալների և սպանդի ծառայության մատուցման վերաբերյալ Ծրագրի N 3 ձևին համապատասխան իր կողմից կազմված տեղեկանքը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1499-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) N 2 հավելվածով հաստատված խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի արդյունքում «Սպանդանոցների կառավարում» միասնական էլեկտրոնային հարթակից գեներացված N 5 ձևի անասնաբուժական վկայականի (այսուհետ՝ N 5 ձևի անասնաբուժական վկայական) պատճենը.
3) որոշման N 2 հավելվածով հաստատված N 1 ձևի անասնաբուժական վկայականի պատճենը (այսուհետ՝ N 1 ձևի անասնաբուժական վկայական), եթե մատուցվել է բրուցելոզով հիվանդ կամ դրական հակազդած խոշոր եղջերավոր կենդանու սպանդ և դրանում առկա է նշում խոշոր եղջերավոր կենդանու բրուցելոզով հիվանդ կամ դրական հակազդած լինելու մասին.
4) խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի ծառայություն մատուցելու վերաբերյալ Ծրագրի N 4 ձևին համապատասխան լրացված հայտարարության բնօրինակը.
5) սպանդանոցի կողմից սպանդի ծառայության մատուցման դիմաց սահմանված վճարի և Ծրագրով նախատեսված պետության կողմից տրամադրվող փոխհատուցման տարբերության չափով գանձված վճարը հիմնավորող փաստաթղթի պատճենը,
ա. եթե սպանդանոցի կողմից սահմանված սպանդի ծառայության վճարի չափը գերազանցում է 10000 Հայաստանի Հանրապետության դրամը,
բ. եթե սպանդանոցի կողմից բրուցելոզով հիվանդ կամ դրական հակազդած խոշոր եղջերավոր կենդանու սպանդի ծառայության մատուցման համար սահմանված վճարի չափը գերազանցում է 15000 Հայաստանի Հանրապետության դրամը.
6) տեղեկություն շահառուի հիմնադիր կամ ավելի քան 10 տոկոս բաժնետեր հանդիսացող անձանց անվանումները և նրանց ընտանիքի անդամների (ծնող, ամուսին, զավակ) անունների և ազգանունների մասին։
8. Շահառուն փոխհատուցման ստացման նպատակով Ծրագրի N 2 ձևին համապատասխան դիմումը համայնքի ղեկավարին ներկայացնում է ամսական պարբերականությամբ, մինչև գործունեության իրականացման տվյալ ամսվան հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը ներառյալ։
9. Համայնքի ղեկավարի աշխատակազմը Ծրագրի N 2 ձևին համապատասխան դիմումը ստանալուն հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է դիմումի ուսումնասիրություն և անհամապատասխանությունների բացակայության դեպքում կազմում է Ծրագրի N 5 ձևին համապատասխան եզրակացություն և այն թղթային տարբերակով (գրությամբ) ներկայացնում է նախարարություն՝ կցելով

շահառուի կողմից Ծրագրի N 2 ձևին համապատասխան ներկայացված դիմումի և կից փաստաթղթերի պատճեները։
10. Համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից Ծրագրի N 2 ձևին համապատասխան ստացված դիմումը մերժվում է, եթե՝
1) դիմումը ներկայացվել է Ծրագրի 7-րդ և 8-րդ կետերում նշված պահանջների և ժամկետների խախտմամբ.
2) Ծրագրի 7-րդ կետի 1-ին ենթակետում նշված հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի համաձայն Ծրագրի N 2 ձևին համապատասխան դիմումի ներկայացման օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով առկա են չկատարված պարտավորություններ.
3) Ծրագրի N 3 ձևը լրացված է թերի (ոչ ամբողջական).
4) Ծրագրի N 3 և N 4 ձևերում նշված տեղեկատվություններում առկա են անհամապատասխանություններ.
5) Ծրագրի N 3 կամ N 4 ձևերը բացակայում են, կամ լրացված են թերի (ոչ ամբողջական) կամ Ծրագրի N 3 կամ N 4 ձևերին ոչ համապատասխան.
6) Ծրագրի N 3 կամ N 4 ձևերում առկա են շահառուին սեփականության կամ օգտագործման իրավունքով կամ շահառուի հիմնադիր կամ ավելի քան 10 տոկոս բաժնետեր հանդիսացող անձիք կամ նրանց ընտանիքի անդամներ (ծնող, ամուսին, զավակ).
7) N 1 կամ N 5 ձևերի անասնաբուժական վկայականների պատճենները բացակայում են.
8) բրուցելոզով հիվանդ կամ դրական հակազդած խոշոր եղջերավոր կենդանու տեղափոխման N 1 ձևի անասնաբուժական վկայականում առկա չէ խոշոր եղջերավոր կենդանու բրուցելոզով հիվանդ կամ դրական հակազդած լինելու վերաբերյալ նշում.
9) Ծրագրի N 3 կամ N 4 կամ ձևերում առկա չէ խոշոր եղջերավոր կենդանու նույնականացման անհատական համարը, կամ լրացված է այնպիսի համար, որը չի համապատասխանում «ԱՆԻ ՊԱՍ» էլեկտրոնային տեղեկատվական համակարգում (այսուհետ՝ համակարգ) առկա տվյալներին, կամ շահառուի կողմից ներկայացված N 5 ձևի անասնաբուժական վկայականում նշված խոշոր եղջերավոր կենդանու նույնականացման անհատական համարը չի համապատասխանում Ծրագրի N 3 ձևում լրացված նույնականացման անհատական համարին.
10) շահառուի կողմից սպանդի ծառայության համար գանձված վճարի չափը գերազանցում է Ծրագրի N 1 ձևին համապատասխան կնքված համաձայնագրում նշված սպանդի ծառայության մատուցման համար շահառուի կողմից սահմանված ծառայության վճարի և Ծրագրի 4-րդ կետով սահմանված փոխհատուցման տարբերությանը,
11. Համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից Ծրագրի N 2 ձևին համապատասխան ներկայացված դիմումի մերժման դեպքում արձանագրվում է մերժման հիմքը և շահառուին էլեկտրոնային կամ թղթային տարբերակով (գրությամբ) տեղեկացվում է անհամապատասխանությունները վերացնելու և 5 աշխատանքային օրվա ընթացքում Ծրագրի 7-րդ կետում նշված պայմաններով Ծրագրի N 2 ձևին համապատասխան նոր դիմում ներկայացնելու մասին։
12. Համայնքի ղեկավարի աշխատակազմից Ծրագրի N 5 ձևին համապատասխան եզրակացությունը ստանալուն հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում Նախարարության համապատասխան ստորաբաժանումը շահառուի հետ կնքում է սպանդանոցային ծառայության

Ծրագրի 4-րդ կետով սահմանված փոխհատուցում տրամադրելու պայմանագիր։
13. Ծրագրի 12-րդ կետով սահմանված պայմանագիրը կնքելուց հետո Նախարարությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում Համայնքի ղեկավարի աշխատակազմից ստացված Ծրագրի N 5 ձևին համապատասխան եզրակացության հիման վրա փոխհատուցման ենթակա գումարը փոխանցում է շահառուին։
14. Եթե մոնիթորինգի ընթացքում պարզվում է, որ շահառուի կողմից ներկայացված փաստաթղթերում տեղ են գտել Ծրագրով սահմանված պահանջների խախտումներ, ապա այդ խախտումների մասով տրամադրված փոխհատուցումը խախտումները հայտնաբերելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում շահառուի կողմից վերադարձվում է նախարարության համապատասխան հաշվեհամարին՝ կիրառելով Կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 9-ի N 283-Ն որոշումը։
15. Շահառուն և N 1 ձևի անասնաբուժական վկայականը տրամադրողը պետք է խոշոր եղջերավոր կենդանին սպանդանոց տեղափոխող անձին տեղեկացնել Ծրագրի N 4 ձևը լրացնելու պահանջի մասին, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում վերջիններիս աջակցել դրանք լրացնելու հարցում։
16. Խոշոր եղջերավոր կենդանին սպանդանոց տեղափոխող անձը շահառուին է տրամադրում Ծրագրի N 4 ձևին համապատասխան լրացված հայտարարության բնօրինակը և N 1 ձևի անասնաբուժական վկայականի բնօրինակը կամ պատճենը։
17. Շահառուի կողմից սպանդի ենթարկված խոշոր եղջերավոր կենդանու մսեղիքը և ենթամթերքը հանձնվում է խոշոր եղջերավոր կենդանին սպանդանոց տեղափոխող անձին։ Եթե խոշոր եղջերավոր կենդանին սպանդանոց տեղափոխող անձը չի համարվում խոշոր եղջերավոր կենդանու սեփականատերը, ապա տեղափոխող անձն իրեն հանձնված խոշոր եղջերավոր կենդանու մսեղիքը և ենթամթերքը փոխանցում է խոշոր եղջերավոր կենդանու սեփականատիրոջը։
18. Շահառուն սպանդի ենթարկված խոշոր եղջերավոր կենդանու տեղափոխման N 1 ձևի անասնաբուժական վկայականների պատճենները պահպանում է մինչև Ծրագրի ավարտի ամսաթվին հաջորդող 3 տարի ժամկետով և պահանջի դեպքում տրամադրում է մոնիթորինգ իրականացնողին։

3. ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

19. Ծրագրի մոնիթորինգն իրականացվում է Համայնքի ղեկավարի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի (այսուհետ՝ խումբ) կողմից։
20. Խմբի կողմից ընտրանքային մոնիթորինգի է ենթարկվում տվյալ ամսվա ընթացքում ստացված դիմում(ներ)ին կից Ծրագրի N 3 ձևում նշված խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակի առնվազն 25 %-ին վերաբերող տվյալները։
21. Մոնիթորինգն իրականացվում է՝
1) Ծրագրի N 3 ձևի տեղեկանքում և N 1 ու N 5 ձևերի անասնաբուժական վկայականներում նշված խոշոր եղջերավոր կենդանիների նույնականացման անհատական համարների համադրման և նույնականացման միջոցով.
2) Ծրագրի N 3 ձևի տեղեկանքում նշված և համակարգում առկա խոշոր եղջերավոր կենդանիների նույնականացման անհատական համարների

համադրման և նույնականացման միջոցով.
3) շահառուի կողմից սպանդի ենթարկված խոշոր եղջերավոր կենդանու ենթամթերքը Ծրագրի N 4 ձևին համապատասխան հայտարարություն ներկայացրած անձանց տնօրինմանը տրամադրված լինելը՝ հայտարարություն ներկայացրած անձանցից կատարվող հարցումների միջոցով:
22. Տվյալ ամսվա ընթացքում իրականացված մոնիթորինգի արդյունքներով կազմվում է արձանագրություն, որը մինչև արձանագրության կազմման ամսվան հաջորդող ամսվա 25-ը ներկայացվում է նախարարություն:

ՁԵՎ N 1

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N
ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՍՊԱՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան
«___» «_____» 202....թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար .....-ի, որը գործում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պետական մարմին», մի կողմից, սպանդանոցի տեղակայման վայրի համայնքը, ի դեմս համայնքի աշխատակազմի ղեկավար .....-ի, որը գործում է համայնքի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Համայնք» և .....-ն, ի դեմս .....,
(նշել կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը) (նշել պաշտոնը, անունը, ազգանունը)
որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կազմակերպություն», (այսուհետ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի .... -ի N ..... – L որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված Սպանդանոցների կողմից մատուցվող խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի ծառայության վճարի մասնակի փոխհատուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Որոշմամբ հաստատված Ծրագրից օգտվելը և այդ նպատակով համագործակցելն է:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագրով սահմանված փոխհատուցումը ստանալու համար դիմել՝ Ծրագրով սահմանված

պահանջները ապահովելու դեպքում։
2.2 Կազմակերպությունը պարտավորվում է խոշոր եղջերավոր կենդանու սպանդի ծառայության մատուցման դիմաց գանձել սպանդանոցի կողմից սպանդի ծառայության մատուցման համար սահմանված վճարի և Ծրագրով նախատեսված պետության կողմից տրամադրվող փոխհատուցման տարբերության չափով վճար և սպանդի ենթարկված խոշոր եղջերավոր կենդանու մսեղիքը և ենթամթերքը հանձնել խոշոր եղջերավոր կենդանին սպանդանոց տեղափոխող անձի տնօրինմանը։ Եթե խոշոր եղջերավոր կենդանին սպանդանոց տեղափոխող անձին չի համարվում խոշոր եղջերավոր կենդանու սեփականատերը, ապա տեղափոխող անձն իրեն հանձնված խոշոր եղջերավոր կենդանու մսեղիքը և ենթամթերքը փոխանցում է խոշոր եղջերավոր կենդանու սեփականատիրոջը։
2.3 Կազմակերպությունը պարտավորվում է իր կողմից սպանդի ծառայության մատուցման համար սահմանված ..... և բրուցելոզով հիվանդ կամ դրական հակազդած խոշոր եղջերավոր կենդանու սպանդի համար սահմանված ..... Հայաստանի Հանրապետության դրամ վճարները Ծրագրի գործողության ժամանակահատվածում չավելացնել։
2.4 Կազմակերպությունը պարտավորվում է խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի մատուցված ծառայության վերաբերյալ լրացված Ծրագրի N 4 ձևի հայտարարությունը պահանջել և ստանալ խոշոր եղջերավոր կենդանին սպանդանոց տեղափոխող անձից, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում վերջինս աջակցել այն լրացնելու հարցում։
2.5 Կազմակերպությունը պարտավորվում է խոշոր եղջերավոր կենդանին սպանդանոց տեղափոխող անձից պահանջել և ստանալ N 1 ձևի անասնաբուժական վկայականի պատճենը կամ լուսապատճենը և այն պահպանել մինչև Ծրագրի ավարտի ամսաթվին հաջորդող 3 տարի ժամկետով և պահանջի դեպքում տրամադրել մոնիթորինգ իրականացնողին։
2.6 Կազմակերպությունը պարտավորվում է իր կողմից ներկայացված փաստաթղթերում Ծրագրով սահմանված պահանջների խախտումներ հայտնաբերվելու դեպքում խախտումների մասով տրամադրված փոխհատուցումը խախտումները հայտնաբերելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնել նախարարության համապատասխան հաշվեհամարին։
2.7 Համայնքը պարտավորվում է ընդունել Կազմակերպությունների կողմից ներկայացված դիմումները, Ծրագրով սահմանված պայմաններով և ժամկետներում կատարել դիմումների ուսումնասիրություն և Պետական մարմին ներկայացնել Ծրագրի N 5 ձևին համապատասխան եզրակացությունը։
2.8 Համայնքը պարտավորվում է իրականացնել Ծրագրի մոնիթորինգ և կազմված արձանագրություններն ամսական պարբերականությամբ՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը ներկայացնել Պետական մարմին։
2.9 Պետական մարմինը պարտավորվում է Կազմակերպության կողմից սույն համաձայնագրի 1.2-րդ կետում նշված պահանջների ապահովման դեպքում սահմանված կարգով տրամադրել համապատասխան փոխհատուցումը։

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Ծրագրի 3-րդ կետով սահմանված ժամկետում խոշոր եղջերավոր կենդանին սպանդանոց տեղափոխող անձի համար սպանդի

ծառայության մատուցման դիմաց Ծրագրով սահմանված պահանջներին համապատասխան փոխհատուցման տրամադրումը.
3.2 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով.
3.3 Համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, երեք օրինակից և երեք էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ՀԱՄԱՅՆՔ	ԿԱԶՄԱԿԵՐՊ
	.....	.....
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	(Համայնքի անվանումը)	(կազմակերպ կամ անհատ անունը, ազգ
Հասցե՝	Հասցե	Հասցե .....
0010, ք. Երևան, Միեր Մկրտչյան 5	.....	.....
ՀՀ ֆինանսների նախարարության		
գործառնական վարչություն		Հ/Հ.....
Հ/Հ	Հ/Հ.....	ՀՎՀՀ.....
ՀՎՀՀ 02698604	ՀՎՀՀ	Հեռ.....
Հեռ.....	Հեռ.....	.....
ՀՀ էկոնոմիկայի նախարարության	.....	.
գլխավոր քարտուղար	(Շահառուի ներկայացուցչի պաշտոնը, անունը, ազգանունը)	(Շահառուի ն պաշտոնը, ա
ՀԱՅԿԱԶ ՆԱՍԻԲՅԱՆ		
_____	_____	
(ստորագրություն) Կ. Տ	(ստորագրություն) Կ. Տ.	(ստորագ

ՁԵՎ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ..... ՄԱՐԶԻ .....
(նշել մարզի անվանումը) (նշել համայնքի անվանումը)
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

.....
....-ԻՑ
(նշել կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, ՀՎՀՀ-ն, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն)

Դ Ի Մ ՈՒ Մ

ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՍՊԱՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ .....
....-ի
(նշել կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)
կողմից 202... թվականի .....-ին խոշոր եղջերավոր կենդանիների սպանդանոց
(նշել ամիսը)
տեղափոխող անձանց համար մատուցված սպանդի ծառայության՝ Ծրագրի ընթացակարգի հիման վրա հաշվարկված .....(.....) դրամ փոխհատուցումը
(նշել գումարի չափը թվերով) (նշել գումարի չափը տառերով)

փոխանցել .....-ի
..... գործող
(նշել կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը) (նշել ֆինանսական կազմակերպության անվանումը)
N ..... հաշվեհամարին:
Առդիր՝ .... էջ:

Ստորագրող

....

(պաշտոնը) (անունը, ազգանունը)

.....

(ստորագրությունը)
.... 202....
թ.

Կ.Տ.

ՁԵՎ N 3

ՏԵՂԵԿԱՆՔ

..... ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ
.... -ի
(նշել ամիսը, կամ ամիսները) (նշել կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և ՀՎՀՀ-ն)
ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՍՊԱՆԴԱՆՈՑ ՏԵՂԱՓՈԽՈՂ ԱՆՁԱՆՑ, ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/h	Խոշոր եղջերավոր կենդանին սպանդանոց տեղափոխող անձի անվանումը կամ անունը ազգանունը, ՀՎՀՀ՝ առկայության դեպքում	N 1 ձևի անասնա-բուժական վկայականի համարը և տրման ամսաթիվը	Գլխաքանակը /հատ/	Կենդանի քաշը, /կգ/	Սպանդի ամսաթիվը	Սպանդի ծառայության դիմաց գանձված վճարը՝ առկայության դեպում /ՀՀ դրամ/
1						
2						
3						
Ընդամենը		X			X	

Ստորագրող

....

(պաշտոնը) (անունը, ազգանունը)

.....

(ստորագրությունը)
.... 202....
թ.

Կ.Տ.

ՁԵՎ N 4

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

.....
.....
(նշել խոշոր եղջերավոր կենդանին սպանդանոց տեղափոխող անձի անունը, ազգանունը, հայրանունը, կամ կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, ՀՎՀՀ-ն և հեռախոսահամարը)
սույն հայտարարությամբ հավաստում եմ, որ սեփականության իրավունքով ինձ պատկանող կամ
.....-ի
(նշել սեփականատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը անձնագրի համարը, կամ նույնականացման քարտի համարը,), (ընդգծել այն հատվածը, որին համապատասխանում է հայտարարատուն)
կողմից ինձ փոխանցված
.....
.....
(նշել խոշոր եղջերավոր կենդանու նույնականացման անհատական համարը)
.....
.....
(նշել խոշոր եղջերավոր կենդանու նույնականացման անհատական համարը)
.....
.....
(նշել խոշոր եղջերավոր կենդանու նույնականացման անհատական համարը)
.....
.....
(նշել խոշոր եղջերավոր կենդանու նույնականացման անհատական համարը)
նույնականացման համարներով ..... խոշոր եղջերավոր կենդանիները սպանդի են
(նշել սպանդի ենթարկված խոշոր եղջերավոր կենդանու (ների) թիվը)
ենթարկվել
.....-ի
(նշել սպանդի ծառայություն մատուցած կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գործունեության իրականացման հասցեն)
կողմից ընդամենը ..... Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով, իսկ սպանդից ստացված մեղիքն ու ենթամթերքն ամբողջությամբ տրամադրվել է ինձ՝ սեփականատիրոջը փոխանցելու նպատակով:
(ընդգծել այն հատվածը, որին համապատասխանում է հայտարարատուն)
Գիտակցում եմ, որ կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկատվություն (տվյալ) ներկայացնելը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:
Ստորագրող՝

....

(նշել խոշոր եղջերավոր կենդանին սպանդանոց տեղափոխող անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի համարը, կամ նույնականացման քարտի համարը, կամ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պաշտոնատար անձի անունը, ազգանունը, հեռախոսահամարը)

(նշվում է պաշտոնը կազմակեր անհատ ձեռ լինելու դեպ

.....

(ստորագրությունը)

.... 20.....թ.

Կ.Տ*.
* -կնիքվում է, եթե խոշոր եղջերավոր կենդանին սպանդանոց տեղափոխող անձը կազմակերպություն է կամ անհատ ձեռնարկատեր։

ՁԵՎ N 5

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N _ _

....-Ի ԿՈՂՄԻՑ 202...
ԹՎԱԿԱՆԻ
(նշել կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)
..... ԱՄՍԻՆ ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՍՊԱՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՄՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՉԱՓՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

..... մարզի ..... համայնքի ղեկավարին ներկայացված 202... թվականի

..... -ի N ..... դիմումի համաձայն
.....- ի

(նշել մուտքի համարը) (նշել կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

(ՀՎՀՀ՝ .....) կողմից 202... թվականի ..... ամսվա ընթացքում Ծրագրի շրջանակներում կատարվել է ..... գլուխ խոշոր եղջերավոր կենդանու սպանդ և
(նշել սպանդի ենթարկված խոշոր եղջերավոր կենդանու (ների) թիվը)
Ծրագրի ընթացակարգի հիման վրա հաշվարկված սպանդի ծառայության արժեքի պետության կողմից փոխհատուցման ենթակա գումարը կազմում է .....(.....) դրամ, որը ենթակա է վճարման
(նշել գումարի չափը թվերով) (նշել գումարի չափը տառերով)

.....
.....-ի
(նշել կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը)
.....-ում գործող N .....

հաշվեհամարին։
(նշել ֆինանսական կազմակերպության անվանումը) (նշել հաշվեհամարը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

..... մարզի
..... համայնքի
աշխատակազմի ....
ղեկավար
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

.... 202...թ.